ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

Ընտանեկան դրամագլխի սպասարկման Պետական աջակցության հաշիվ

1. Ընտանեկան դրամագլխի պասարկման Պետական աջակցության հաշվի ընդհանուր պայմանները.

- Ընտանեկան դրամագլխի սպասարկման պետական աջակցության հաշիվ /այսուհետ՝ Հաշիվ/ ՝ երեխայի /այսուհետ՝ Հաշվետեր/անվամբ Բանկում բացված հատուկ հաշիվ, որում առկա միջոցները տնօրինելը սահմանափակված է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ.
- Հաշվում եղած դրական դրամական միջոցների մնացորդի դիմաց Բանկի կողմից վճարվող տարեկան տոկոսադրույքը՝ 0%:
- Հաշվի արժույթը՝ ՀՀ դրամ.
- Հաշվի բացման և սպասարկման միջնորդավճար՝ 0 ՀՀ դրամ.
- Հաշվից փոխանցումներ / ներբանկային, ՀՀ այլ բանկեր /՝ 0 ՀՀ դրամ.
- Մեկ տարվա ընթացքում գործառնություն չիրականացրած Հաշվի պահպանում և սպասարկում՝ 0 ՀՀ դրամ
- Հաշվի փակում՝ 0 ՀՀ դրամ
- Հաշվից քաղվածքի, վճարային այլ փաստաթղթի տրամադրում յուրաքանչյուր գործարքից հետո՝ 0 ՀՀ դրամ
- Հաշվի ամսական քաղվածքի տրամադրում՝ 0 ՀՀ դրամ
- Հաշվի վերաբերյալ տեղեկանքի տամադրում հայերեն լեզվով (ներառյալ ԱԱՀ) - 0 ՀՀ դրամ.
- Պետական աջակցության հաշվի շրջանակներում վարկային պարտավորությունների վերաբերյալ և հիփոթեքային վարկերի ընդհանուր պայմանների համապատասխանության վերաբերյալ տեղեկանքների տրամադրում (ներառյալ ԱԱՀ) - 0 ՀՀ դրամ,
- Տոկոսների հաշվարկ՝ Բանկը տոկոսների հաշվարկն իրականացնում է հաշվում առկա ավանդի ամբողջ գումարի նկատմամբ, ավանդային պայմանագրի ողջ ժամկետի համար՝ օրական կտրվածքով: Ընդ որում, Բանկը յուրաքանչյուր օրվա տոկոսադրույքը հաշվարկում է սահմանված տոկոսադրույքի առնվազն 1/365 հարաբերակցությամբ:
- Տոկոսների վճարման հաճախականությունը՝ ամեսամսյա /տոկոսագումարները յուրաքանչյուր ամիս գումարվում են ավանդի գումարին/:
- Հաշիվը բացվում է Հաշվետիրոջ Ծնողի՝ Ընտանեկան դրամագլուխը տնօրինելու իրավունք ունեցող անձի /այսուհետ՝ Հաճախորդ/ դիմումի հիման վրա:
  <u>Ընտանեկան դրամագլուխը տնօրինելու իրավունք ունեցող անձ՝</u> Հաշվետիրոջ հետ Հայաստանի Հանրապետությունում նույն բնակության վայրում բնակվող (հաշվառված) Ծնող, ով ՀՀ օրենսդրության համաձայն իրավունք ունի տնօրինելու պետական աջակցության հաշվին առկա դրամական միջոցները (ընտանեկան դրամագլուխը տնօրինելու իրավունք ձեռք բերած անձի տվյալները բանկին է տրամադրում լիազոր մարմինը՝ Հաշվետիրոջ հետ ՀՀ-ում նույն բնակության վայրում բնակվող (հաշվառված) Ծնողին նպաստ նշանակելու կամ Հաշվետիրոջ հետ ՀՀ-ում նույն բնակության վայրում բնակվող (հաշվառված) Ծնողի կողմից ընտանեկան դրամագլուխը տնօրինելու դիմումի հիման վրա):
  <u>Ծնող՝</u> հաշվետիրոջ հայրը կամ մայրը, ումից սերված լինելու փաստը որոշված է օրենքով սահմանված կարգով, հաշվետիրոջ խնամակալը կամ որդեգրողը:

2. Այլ պայմաններ և սահմանափակումներ.

- Հաշվին չի թույլատրվում կատարել կանխիկ և անկանխիկ մուտքագրումներ:
- Հաշվետերն իրավունք ունի առանց սահմանափակումների տնօրինելու ընտանեկան դրամագլուխը՝ 18 տարին լրանալուց հետո:
- Ընտանեկան դրամագլուխը, մինչև Հաշվետիրոջ 18 տարին լրանալը, անկանխիկ վճարումներ կատարելու միջոցով տնօրինվում է ընտանեկան դրամագլուխը տնօրինելու իրավունք ունեցող անձի կողմից /այսուհետ՝ Հաճախորդ/՝ բացառապես հետևյալ ուղղություններով .
  1) Հայաստանի Հանրապետությունում բնակարանի, բնակելի տան գնման, կառուցման համար տրամադրված և հիփոթեքով ապահովված վարկի տոկոսագումար վճարելու և մայր գումար մարելու համար, եթե վարկառուն հաշվետիրոջ Ծնողն է (բացառությամբ խնամակալի).
  2) հաշվետիրոջ կամ հաշվետիրոջ կարգաթիվը որոշելու համար հաշվի առնված ընտանիքի անդամի, Հաշվետիրոջ Ծնողի՝ ՀՀ կառավարության 27.12.2012թ. N1691-Ն որոշմամբ սահմանված ուսումնական հաստատություններում ուսումնառելու ընթացքում ուսման վարձը (նախադպրոցական ուսումնական հաստատության վարձավճարը) վճարելու համար.
  3) հաշվետիրոջ ծնողին (բացառությամբ խնամակալի) տրամադրված վարկի տոկոսագումար վճարելու և մայր գումար մարելու համար, եթե վարկի տոկոսադրույքը մասնակի սուբսիդավորվում է ՀՀ կառավարության 31.03.2011թ. N 349-Ն որոշման 4-րդ կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի համաձայն և առկա է ՀՀ կառավարության աշխատակազմի «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի գյուղական ֆինանսավորման կառույցի եզրակացությունը վարկը նպատակային օգտագործելու վերաբերյալ.
  4) Հայաստանի Հանրապետության կառավարության 14.07.2005թ. N 1017-Ն որոշմամբ սահմանված հեռավոր, սահմանամերձ, բարձրլեռնային, լեռնային, մինչև 1000 բնակիչ ունեցող գյուղական բնակավայրերում, ՀՀ Գեղարքունիքի մարզի Այգուտ, Լոռու մարզի Եղեգնուտ, Սյունիքի մարզի Տաթև, Տավուշի մարզի Իծաքար բնակավայրերում բնակարանի կամ բնակելի տան կամ այլ անշարժ գույքի (այսուհետ՝ գույք) գնման համար, եթե գնորդը հաշվետիրոջ ծնողն է՝ բացառությամբ խնամակալի (գումարը գույք վաճառողի բանկային հաշվին փոխանցելու միջոցով).
  5) նոր ծնված երեխայի մեկ տարին լրանալու ամսվան հաջորդող ամսվանից՝ ցանկացած բանկային հաշվի փոխանցելու միջոցով պարբերական կամ միանվագ վճարումներ կատարելով, բայց ոչ ավելի, քան ամսական 25000 դրամը (սույն ենթակետի գործողությունը դադարում է 2018 թվականի դեկտեմբերի 30 ներառյալ):

- Հաշվում առկա գումարները ենթակա չեն կանխիկացման, բացառությամբ ՀՀ Կառավարության 2014թվականի մարտի 6-ի՝ «Երեխայի ծննդյան միանվագ նպաստի չափը սահմանելու, երեխայի ծննդյան միանվագ նպաստ նշանակելու և վճարելու կարգը հաստատելու մասին» N 275-Ն որոշմամբ և Բանկի վարչության կողմից հաստատված Ընտանեկան դրամագլխի տնօրինման նպատակով պետական աջակցության հաշվի բացման և ընտանեկան դրամագլխի սպասարկման հիմնական (ընդհանուր) կանոններով /այսուհետ՝ Ընդհանուր կանոններ/ նախատեսված հատուկ դեպքերի:
- Հաշիվը բացելու և Հաշվում առկա դրամական միջոցները տնօրինելու համար՝ Հաճախորդը Բանկ է ներկայանում Ընդհանուր կանոններով նախատեսված փաստաթղթերը:
- Բանկն իրավունք ունի Լիազոր մարմնի պահանջագրի հիման վրա իրականցնել հետևյալ գործառույթները.
  - առանց Հաճախորդի լրացուցիչ կարգադրության, համապատասխան պահանջագիրը ներկայացնելու օրվան հաջորդող երրորդ բանկային օրվանից ոչ ուշ փակել Պետական աջակցության հաշիվը և դրանում առկա դրամական միջոցները փոխանցել այլ

պետական աջակցության հաշիվ կամ Հայաստանի Հանրապետության պետական բյուջե,
  - Լիազոր մարմնի պահանջագրի հիման վրա փակել Պետական աջակցության հաշիվը և Պետական աջակցության հաշվին առկա միջոցները վճարել պահանջագրում նշված անձին.
  - Լիազոր մարմնի պահանջագրի հիման վրա դադարեցնել պետական աջակցության հաշվով գործառույթների իրականացումը (այդ թվում՝ հաշվետիրոջ մահվան դեպքում).
  - Պետական աջակցության հաշվին առկա միջոցներն սպառվելու (զրոյացվելու) դեպքում միակողմանիորեն փակել պետական աջակցության հաշիվը և դրա մասին տեղեկացնել Լիազոր մարմնին.
  - Լիազոր մարմնի կողմից ներկայացված պահանջով Լիազոր մարմնին տրամադրել Պետական աջակցության հաշվի մասին տեղեկատվություն (այդ թվում՝ փաստաթղթերի պատճեններ).
  - Լիազոր մարմնի պահանջագրի հիման վրաՊետական աջակցության հաշվից ՀՀ պետական բյուջե փոխանցել ավելի վճարված ընտանեկան դրամագլխի գումարները:
- Համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 907 հոդվածի 1-ին կետի, Բանկային ավանդի գումարի վրա տոկոսները հավելագրվում են ավանդը Բանկ մուտք լինելու օրվանից մինչև այն Ավանդատուին վերադարձնելու կամ Ավանդատուի հաշվից այլ հիմքերով դուրս գրելու օրվան նախորդող օրը:
- Հաճախորդը պարտավոր է պահպանել ՀՀ օրենքների և դրանց համապատասխան սահմանված բանկային կանոնների, բանկային հաշվի բացման և սպասարկման մասին Բանկում գործող ընթացակարգերի պահանջները:
- Բանկային հաշվում առկա դրամական միջոցները նախատեսված դեպքերում վերադարձվում է այն արժույթով, որով ներդրվել է:
- Հաշվի բացման պայմանագիրը կորցնելու դեպքում, հասցեի փոփոխության, Հաճախորդին կամ Հաշվետիրոջը նույնացնելու համար այլ անհրաժեշտ փաստաթղթերի կորստի կամ փոփոխության դեպքում, Հաճախորդը պարտավոր է 10 (տաս) բանկային օրվա ընթացքում տեղյակ պահել Բանկին անհրաժեշտ ձևակերպումներ իրականացնելու համար, ընդ որում Հաճախորդը կրում է պատասխանատվություն հիշյալ ժամկետում Բանկին համապատասխան փոփոխությունների մասին չտեղեկացնելու հետևանքների համար:
- Եթե Հաշվում առկա դրամական միջոցների վերադարձի օրը/Ընդհանուր կանոններով նախատեսված դեպքերում/ համընկնում է ոչ աշխատանքային օրվա հետ, ապա վերադարձը կատարվում է ոչ աշխատանքային օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը՝ ոչ աշխատանքային օրերի համար վճարելով տոկոսներ:
- Բանկն իրավունք ունի փոփոխելու Հաշվում եղած դրամական միջոցների համար վճարվող տոկոսների չափը, եթե պայմանագրով այլ բան նախատեսված չէ:
- Պայմանագրի գործողության ընթացքում կատարված փոփոխությունները՝ պայմանագրի պայմանների, կողմերի իրավունքների, պարտականությունների, պատասխանատվության սահմանման, փոփոխման կամ դադարեցման կամ պայմանագրի վրա որևէ ազդեցություն ունեցող բանկի ներքին ակտերի փոփոխման դեպքում, որը հանգեցնում է տարեկան տոկոսային եկամտաբերության փոփոխման, Բանկը պարտավոր է գրավոր, փոստային կապի միջոցով տեղեկացնել Ավանդատուին՝ նոր պայմանների վերաբերյալ՝ տարեկան տոկոսային եկամտաբերության փոփոխման օրվանից առնվազն 15 օր առաջ:
- Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն, ֆինանսական գործառնությունների դիմաց վճարվող տոկոսագումարներն իրականացվում են ՀՀ դրամով:
- **Բանկը, հանդիսանալով Ֆիզիկական անձ-ավանդատուի հարկային գործակալ, կատարում է գանձումներ համաձայն ՀՀ և ԼՂՀ հարկային օրենսդրության: Ավանդներից ստացված եկամուտները ենթակա են հարկման ՀՀ տարածքում՝ ավանդի դիմաց հաշվեգրված տոկոսագումարի 10% (տաս տոկոսի) չափով, ԼՂՀ տարածքում՝ 5% (հինգ տոկոսի) չափով, իսկ օտարերկրյա քաղաքացիներից և քաղաքացիություն չունեցող անձանցից՝ 10% (տաս տոկոսի) չափով:**

3. Հաճախորդի իրավունքների պաշտպանությունը՝
- Ավանդային պայմանագրից բխող բողոք առաջանալու դեպքում, Ավանդատուն կարող է պաշտպանել իր խախտված իրավունքները դիմելով Բանկ, անհամաձայնության դեպքում՝ դիմել դատարան կամ Ֆինանսական համակարգի հաշտարարին:
- Բանկը պարտավոր է քննել Ավանդատուի բողոք-պահանջը, եթե այն ներկայացվել է մեկ տարվա ընթացքում՝ սկսած այն պահից, երբ Ավանդատուն իմացել է կամ կարող էր իմանալ իր իրավունքի խախտման մասին:
- Բանկը պարտավոր է 10 (տաս) աշխատանքային օրվա ընթացքում Ավանդատուին տալ վերջնական պատասխան: Բանկի պատասխանը Ավանդատուին չբավարարելու դեպքում, վերջինս վեց ամսվա ընթացքում կարող է դիմել Ֆինանսական համակարգի հաշտարարին, համաձայն 'Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին' ՀՀ օրենքի, կամ դիմել դատարան՝ օրենքով սահմանված կարգով: Ֆինանսական համակարգի հաշտարարը իրավունք ունի քննելու այն պահանջները, որոնք ներկայացվել են հաճախորդի կողմից կազմակերպության դեմ, կապված են կազմակերպության կողմից մատուցվող ծառայությունների հետ և պարունակում են 10 000 000 ՀՀ դրամ կամ դրան համարժեք այլ արժույթով գումարը չգերազանցող գույքային պահանջ:

4. Երաշխավորված ավանդի չափերը՝

«Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի համաձայն, ՀՀ տարածքում գործող բանկերում ֆիզիկական անձանց (այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերի) բանկային ավանդների հատուցումը երաշխավորված է Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի կողմից:

Երաշխավորվում են ավանդատուի ինչպես դրամային, այնպես էլ արտարժութային ավանդները: Օրենքով սահմանված են երաշխավորված ավանդների հետևյալ չափերը.
- **եթե ավանդատուն բանկում ունի միայն դրամային բանկային ավանդ, ապա երաշխավորված ավանդի չափը տասնվեց միլիոն հայկական դրամ է.**
- **եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի միայն արտարժութային բանկային ավանդ, ապա երաշխավորված ավանդի չափը յոթ միլիոն հայկական դրամ է.**
- **եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի դրամային եւ արտարժութային բանկային ավանդներ, և դրամային բանկային ավանդի գումարը յոթ միլիոն հայկական դրամից ավելի է, ապա երաշխավորվում է միայն դրամային ավանդը՝ մինչև տասնվեց միլիոն հայկական դրամով.**
- **եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի դրամային և արտարժութային բանկային ավանդներ, և նրա դրամային բանկային ավանդի գումարը պակաս է յոթ միլիոն հայկական դրամից, ապա երաշխավորվում է դրամային բանկային ավանդն ամբողջությամբ եւ արտարժութային բանկային ավանդը՝ յոթ միլիոն դրամի և հատուցված դրամային բանկային ավանդի տարբերության չափով:**

Ավանդատուի՝նույն բանկում ունեցած բոլոր դրամային ավանդները համարվում են մեկ ավանդ և ավանդատուի՝նույն բանկում ունեցած բոլոր արտարժութային ավանդները համարվում են մեկ ավանդ:

5. Տարեկան տոկոսային եկամտաբերություն.

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՁԵՐ ՀԱՇՎՈՒՄ ԱՌԿԱ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ ԵՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ (ՊԱՐԶ) ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ: ԻՍԿ ՏԱՐԵԿԱՆ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԵԿԱՄՏԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՑՈՒՅՑ Է ՏԱԼԻՍ ԹԵ ՈՐՔԱՆ ԵԿԱՄՈՒՏ ԿՍՏԱՆԱՅԻՔ ԴՈՒՔ, ԵԹԵ ՁԵՐ ԱՎԱՆԴԻ ԴԻՄԱՑ ՍՏԱՑՎԱԾ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՎԵՐԱՆԵՐԴՆԵԻՔ ԱՎԱՆԴԻ ՏԵՍՔՈՎ:

6. Տեղեկատվություն տոկոսադրույքների վերաբերյալ.

Հաշվի տարեկան տոկոսային եկամտաբերությունը (APY) ցույց է տալիս , թե որքան կկազմի հաշվի տարեկան եկամտաբերությունը Հաճախորդի կողմից հաշվի հետ կապված պարտադիր վճարներ կատարելու և ստացված տոկոսագումարները մայր գումարին ավելացնելու /կապիտալացման/ արդյունքում:

7. Այլ տեղեկություններ, Բանկի վերաբերյալ տվյալներ.

«ԱՄԻՕ ԲԱՆԿ» Փակ Բաժնետիրական Ընկերություն
Հասցե՝ ՀՀ ք.Երևան 0010, Նալբանդյան 48, Հեռ.՝ (+37410) 59-20-20, (+37460) 37-25-00, ֆաքս՝ +37410 59 20 64
Viber՝ (+37494) 11-44-88, WhatsApp՝ (+37494) 11-44-88
Ինտերնետային կայք՝ www.amiobank.am, էլ. Փոստ՝ www.amiobank.am
Գրանցման վկայական՝ թիվ 0176, տրված 10.12.1991թ., Բանկային գործունեության լիցենզիա՝ թիվ 40, տրված 10.12.1991թ.
Ծառայությունների ցանկը, որը Բանկը իրավունք ունի մատուցել՝ համաձայն «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի Գլուխ 4-ի:
Ամբողջական պայմաններին կարող եք ծանոթանալ հետևյալ http://www.amiobank.am/am/page/bank-soc-acc հղմամբ :